

հնչալես զանազան կրօններն (Քրիստոնեություն, եւայլն...) ու արեւելեան կրօնափիլիսոփայութիւնները (Բուդդայականութիւն, եւայլն...), նոյնպէս բազմաթիւ պետութիւններ, բացարձակապէս կը պաշտպանեն սաղմը ու անոր կեանքի կամ ապրելու իրաւունքը („Pro-Life“) եւ *արհեստական վիժումը* արգիւում ու դատապարտելի կը նկատեն: Այս գաղափարին հակադրողները, այսինքն՝ *վիժումի* կողմնակիցները („Pro-Choice“), նախ կը պնդեն որ սաղմը տակաւին *անձ* (Person) մը չէ, իր զգացական, բանական եւ գիտակցական կարողութիւններով ապա մանրամասնութեամբ կը զանազանեն սաղմի զարգացման տարբեր հանգրուանները՝ բեղմնաւորութենէն սկսեալ, մինչեւ մարմնի մասերու եւ հիւստածքներու վերջնական ձեւաւորումը: *Արհեստական վիժումի* կողմնակիցները նաեւ կը մատնանշեն յղի կնոջ ազատօրէն ինքնորոշման իրաւունքները, որոնք մաս կը կազմեն կիներու ազատագրական շարժումին<sup>(100)</sup>:

Չուտ բժշկական տեսանկիւնէն դիտուած, եթէ *արհեստական վիժում* մը (աբորտ) տեղի պիտի ունենայ, ան պէտք է կատարուի շատ կանուխ, յղութեան սկզբնական շրջանին:

Յղի կնոջ, *արհեստական վիժումը* կրնայ սակայն, բժիշկին կողմէ որպէս ցուցմունք (ցուցում = Indication) թելադրելի ըլլալ, եթէ օրինակ կինը ծանր հիւանդութենէ մը կը տառապի (օրինակ՝ քաղցկեղ = Cancer կամ սրտի անբաւարարութիւն = Heart Failure) կամ յղութեան պատճառով, յղի կնոջ մօտ հիւանդութիւն մը յառաջացած է (օրինակ՝ Էկլամպսիա = Eclampsia), որ կը սպառնայ թէ՛ յղի կնոջ եւ թէ իր սաղմի կեանքերուն վրայ:

*Արհեստական վիժումի* որոշման առաջնահերթութիւնը անպայմանօրէն կը տրուի յղի կնոջ, անշուշտ բժշկական մանրամասն խորհրդատուական զրոյցէ ետք: Այլ խօսքով, յղի կինը իր սեփական եւ ազատ կամքով որոշում պէտք է կայացնէ, ի՞ր յղութեան առնչութեամբ:

Տարակարծութիւններու նիւթ է սակայն յղի կնոջ կարգավիճակը եւ որպէս կին՝ անոր ինքնավարութիւնը ու իրաւական հարցերը, որոնք երկրէ երկիր ու միջավայրէ միջավայր շատ կը տարբերին: Այստեղ, ընդհանրապէս, նկատի պէտք է առնուին՝ խնդրոյ առարկայ կնոջ յղութեան կամայ թէ ակամայ պատճառները (օրինակ՝ բռնաբարումի քրեական պարագաները) ու առանձին ապրող կնոջ բարեկեցութիւնը: Այս իմաստով, շատ վիճելի նիւթեր են, յղի կնոջ՝ անձնական, տնտեսական, հոգեբանական, ընկերահասարակական ու բարոյական պատասխանատուութեան զանազան պատճառները:

(100) **Կիներու ազատագրական շարժում** (անգլ.՝ Women's Liberation Movement - WLM, գերմ.՝ Frauenbefreiungsbewegung - FBB), որ Չուիցերիոյ մէջ, 1960-ականներու վերջերը սկսած եւ արեւմտեան յառաջադէմ աշխարհի մէջ տարածուած շարժում մըն է, իր իւրայատուկ աշխարհայացքով եւ այրերու հետ համահաւասարութեան իրաւունքներով: Շարժումը կը բաղկանայ, զանազան երկիրներու մէջ գտնուող ինքնավար տարբեր խմբաւորումներէ: